

ԿԱՌԱՎ ԽՈՐԱԿԻՐՈՒԹՅԱՆ

Խ. Ա. ԵՐԻՑՅԱՆ

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ Մ Ա Ս Ի Ն

Մեր գյուղատնտեսական գրականության մեջ տերմինները (առարկաների և գործողությունների անունները) հաճախ սխալ են դորժածվում: Շատ տերմիններ էլ սխալ են մեկնարանված նաև մեր բառարաններում: Պատկերացում է տերմինների խառնաշփոթություն: Մյուս կողմից էլ մեր մասնագետներից ոմանք, ելնելով սխալ հիմունքներից, անհաջող տերմիններ են հորինում, մի բան, որն ավելի է խճճում գրությունը: Վերջին հաշվով ստացվում է գյուղատնտեսական տերմինների ծայր աստիճան աններդաշնակություն:

Լեզվի ճոխությունն ու հստակությունը բարձր կուլտուրա ստեղծելու նախապայմանն են հանդիսանում: Լավ մշակված տեխնիկական լեզուն մեծ չափով նպաստում է նաև գրական ու խոսակցական լեզվի բարգավաճմանը, հետևաբար պետք է պայքարել տեխնիկական լեզվի հստակության համար:

Բառարաններում եղած գյուղատնտեսական տերմինների մի քանի սխալների և հակասությունների մասին ուզում ենք անել մի երկու դիտողություն: Որպես օրինակ, նախ բերենք *նոսուր* (աճար) և տեսենք, թե ինչպես է նա լուսարանվում մեր բառարաններում:

Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ 1947 թվականին լույս տեսած հայ-ռուսերեն բառարանում հաճառը թարգմանված է *рожь*, տարեկանը նույնպես *рожь* է թարգմանված: Դադրաշյանի *ռուս-հայերեն բառարանում* *рожь*-ը թարգմանված է հաճար, բերված է նաև *рожь-ի լատիներենը՝ Secale cereale*, ուրեմն, ըստ Դադրաշյանի նույնպես, հաճառը և *рожь*-ը միևնույն բույսն է:

Ստ. Մախասյանցի «Բացատրական բառարան»-ում հաճառը լատիներեն նշանակում է թե՛ *Secale cereale* և թե՛ *triticum dicoccum* (հատոր 3, էջ 19), այնինչ եթե ելնենք լատիներեն անվանումներից, ապա *Secale cereale* հացահատիկը *ռուսերեն* նշանակում է *рожь* (աշորա, տարեկան), իսկ *Triticum dicoccum*-ը *полба* (հաճար), այսինքն, դրանք բոլորովին տարբեր բույսեր են:

1933 թվականին լույս տեսած «*Ռուս-հայերեն նոր բառարանը*» թե՛ *полба*-ն և թե՛ *рожь*-ը թարգմանել է հաճար (աճար) (երկրորդ հատոր, էջեր 433 և 867):

Նույն սխալը կրկնել է և 1943 թվականին լույս տեսած «*Ռուս-հայերեն բառարանը*» (էջեր 293 և 384). Ուրեմն, այս բառարաններից զգալի է գլուխ հանել, թե ո՞րն է ճիշտը: Սակայն ով ծանոթ է այս բույսերին, նա գիտե, որ *Secale cereale* հացարույսը *ռուսերեն* կոչվում է *рожь*, իսկ հայերեն՝ աշորա կամ տարեկան (որոշ տեղերում կոչվում են և չավդար, որը թուրքերեն է): *Рожь*-ը (աշորան, տարեկանը) այն հացահատիկն է, որից ստացվում է սև գույնի հաց, աշորու հաց կամ *ржаной хлеб*: Իսկ *Triticum dicoccum* հացարույսը *ռուսերեն* կոչվում է *полба*, հայերեն՝ հաճար (աճար). դա այն հացահատիկն է, որից պատրաստում են ձափար: *Рожь-ի* հետ սա ոչ մի առնչություն չունի, ոչ էլ տարեկանի կամ աշորայի:

Երկու խոսք աշորա և տարեկան տերմինների մասին: Տարեկանը մենք համարում ենք անհաջող տերմին, քանի որ նա ցույց է տալիս տարիքը և գրանով, կարծես, ենթադրվում է, որ նա մի տարեկան բույս է, այնինչ հիմք չկա նրան մի տարեկան անվանելու, որովհետև նա, ինչպես և ցորենը, ունի թե՛ աշնանացան և թե՛ գարնանացան ձևեր,

որոնց հասունացման համար ցանքից մինչև հունձը ամենևին մի տարի չի պահանջվում:

Աշորա-ն ավելի հարմար տերմին է: Ըստ Սահակ վարդապետ Ամատունու «Բառ և բան» բառարանի (1912 թ.) աշորա տերմինը դործածվում էր Լուսում, Սուրմալուի և Էջմիածնի գավառներում, Մուշ քաղաքի շրջակա գյուղերում, պարսկահայերի մոտ և այլուր: Այդ տերմինը տեղ է դրել նաև Ստ. Մալխասյանցի ու Հայկազյան ասածնոն բառարանների մեջ: Իր ժամանակին Երևանի Պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի և հետագայում Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի գիտական աշխատողները աշորա-ն ավելի հարմար համարեցին, քան տարեկան-ը: Այսօր էլ գիտական աշխատողների գերակշռող մասը իր աշխատություններում դործ է ածում աշորա տերմինը:

Մեր բառարաններում մինչև այսօր էլ միատեսակություն չկա նույնիսկ կարտոֆիլ տերմինի նկատմամբ:

Դադրաշյանն իր Ռուս-հայերեն բառարանում картофель-ը թարգմանել է կարտոֆիլ, իրավացիորեն պոչաացնելով, որ դա գետնախնձոր չէ: Իսկ Ստ. Մալխասյանցը կարտոֆիլ-ը (կարտոլ, կարտոփ) համարում է գետնախնձոր: 1947 թվականին հրատարակված հայ-ռուսերեն բառարանը կարտոֆիլ-ը թարգմանել է картофель, իսկ գետնախնձորը՝ земляная груша, սա ճիշտ է: 1945 թվականին հրատարակված ռուս-հայերեն բառարանը картофель-ը թարգմանել է կարտոֆիլ և գետնախնձոր: «Ռուս-հայերեն նոր բառարան»-ը (1933 թ.) картофель-ը թարգմանել է կարտոֆիլ, կարտոլ: Մեր հավատա Ընթերցողը:

Ինչպես հայտնի է, կարտոֆիլ բույսը Ռուսաստան է բերվել 18-րդ դարի առաջին կեսին Իսպանիայից: Ժամանակի ընթացքում մեր ժողովուրդը հասարակացրել է կարտոֆիլ անունը, դարձնելով այն կարտոլ, կարտոփ, բայց սկզբնական կարտոֆիլ անունը չի վերացել: Մեր թարգմանիչները, ցանկանալով հայացնել կարտոֆիլ տերմինը, անունը դրել են գետնախնձոր, երեխ չիմանալով, որ գետնախնձորը առանձին բույս է և նույնիսկ վայրի վիճակում գոյութուն է ունեցել մեզ մոտ կարտոֆիլից դեռ շատ ու շատ առաջ և այդպես էլ կոչվել է ժողովրդի կողմից: Կարտոֆիլը լատիներեն կոչվում է Solanum tuberosum, իսկ գետնախնձորը՝ Helianthus tuberosus, դրանք պատկանում են տարբեր ընտանիքների և բոլորովին առանձին բույսեր են: Հետևաբար, անթույլատրելի է կարտոֆիլը անվանել գետնախնձոր: Կարտոֆիլը վաղուց հայացել է և կարիք չկա նորից «հայացնել», այն էլ ուրիշ բույսի հաշվին: Helianthus tuberosus-ը՝ գետնախնձորը, ռուսերեն կոչվում է земляная груша, ոմանք թարգմանելով ռուսերենից, գետնախնձորն անվանում են գետնատանձ, մոռանալով, որ հայոց բառամթերքում հենց սկզբից գոյութուն է ունեցել գետնախնձոր-ը: 1954 թվականին Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսած ռուս-հայերեն բառարանում земляная груша-ն թարգմանված է միանգամայն ճիշտ՝ գետնախնձոր:

Մեծ խառնաշփոթություն է տիրում մեր բառարաններում նաև տավար տերմինի նկատմամբ: Դադրաշյանը крупный рогатый скот թարգմանել է տավար (էջ 979): Հայ-ռուսերեն բառարանում (1947 թ.) տավարը թարգմանված է скотина, скот բառերով և չի ասված, որ դա ռուսերեն крупный рогатый скот-ն է, այսինքն՝ խոշոր եղջերավոր անասունը: Скот նշանակում է ընդհանրապես անասուն, որն ընդգրկում է դրեթե բոլոր ընտանի կենդանիներին՝ (ձի, ոչխար, այծ և այլն): «Ռուս-հայերեն նոր բառարան»-ում (1935 թ.) երկրորդ հատոր скот բառը թարգմանված է անասուն, և տավար: Ուրեմն, այստեղ էլ անասունն ու տավարը նույնացվում են: Ժիշտ է, բառարանում ասված է, որ крупный рогатый скот նշանակում է խոշոր եղջերավոր անասուն, բայց չի ասված, որ վերջինը հենց ինքը՝ տավարն է: Ռուս-հայերեն երկրորդ բառարանում (1945 թ.) կրկնվում են հիշյալ բառարանների նույն սխալները:

Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում տավար-ը բացատրվում է որպես խոշոր եղջերավոր անասուն՝ կով, եղ, դոմեշ, երինջ, մողի, հորթ, արջառ (հատոր 4): Ուրեմն, այստեղ դոմեշը տավարից չի տարբերվում: Մյուս կողմից՝ դոմեշի մասին առանձին խոսելիս (հատոր 1) դոմեշը մեկնարկվում է որպես սևամեջ եղջերավոր ցեղին պատկանող խոշոր կենդանի, եղից էլ խոշոր, որի լատիներեն անունը բերում է՝ Bos bubalus, այսինչ տավարի, այսինքն, «խոշոր եղջերավոր անասունի» լատիներեն տերմինը՝ Bos taurus-ը չի բերում: Ուստի, ըստ Ստ. Մալխասյանցի, մի կողմից՝ տավարն ու դոմեշը նույնն են, իսկ մյուս կողմից՝ տարբեր ցեղերի պատկանող կենդանիներ: Հակասություններն ավելի են սրվում, երբ նույն բառարանում տավար ասելով հասկացվում են նաև մանր

եղջերավոր անասունները՝ ոչխարն ու այծը (հատոր 4, էջ 390): Ո՞վ չի իմանում, որ ոչխարն ու այծը տավարի հետ ոչ մի առնչութիւն չունեն:

Թե՛ հայերեն խոշոր եղջերավոր անասուն և թե՛ крупный рогатый скот տերմինները պետք է համարել միանգամայն անհաջող, քանի որ, իրականում, խոշոր եղջերավոր անասուն ասելով հասկացվում են անասունների բազմաթիւ տեսակներ, որոնք խոշոր են և եղջերավոր, բայց սովորական крупный рогатый скот կամ Bos taurus (տավար) չեն, այլ յուրաքանչյուրն ունի իր ուրույն անունը: Օրինակ, մեզ մոտ՝ գոմեշը, Ադրբեջանում՝ գոմեշն ու դերուն, Հնդկաստանում՝ գոմեշը, գայալը, գառուրը և բանտենգը, Ղազախստանում, յակը և այլն (տե՛ս «С-Х Энциклопедия», изд. 3-е, հատոր 2, էջ 575): Սրանք բոլորը խոշոր են և եղջերավոր, բայց ոչ մեկը տավար չէ, ուրեմն և Bos taurus չէ: Ռուսաստանում Bos taurus-ը, այսինքն, տավարը խոշոր եղջերավոր անասուն է կոչվել, որովհետև ուրիշ խոշոր եղջերավոր անասուն Ռուսաստանում չի եղել, եղել է միայն տավարը: Ի դեպ՝ ասենք, որ ժողովուրդը մեղանում երբեք խոշոր եղջերավոր անասուն տերմինը չի գործածում, այլ միայն՝ տավար, տավարի միս և ոչ թե խոշոր եղջերավոր անասունի միս:

Բոլոր լեզուներում տավարն արտահայտվում է միաբառ տերմինով, ինչպես, օրինակ, լատիներեն՝ taurina (taurus), հունարեն՝ tauros (ցուլ), ֆրանսերեն՝ tauridec, գերմաներեն՝ Rind, անգլերեն՝ Cattle և այլն: Միայն ռուսերենում է եռաբառ արտահայտվում՝ крупный рогатый скот. Տավար բառի հնչյունական նմանութիւնը taurus-ին, tauros-ին, tauridec-ին հայտանշում է, որ տալիս-ը պատահական տերմին չէ:

Մենք տալիս տերմինի վրա այսքան երկար կանգ առանք, որովհետև մեր մասնագետներից շատերի կողմից նա արհամարհված է, անվայել են համարում գործածել տավար բառը, գերադասում են «խոշոր եղջերավոր անասուն» անիմաստ տերմինը: Դրանց հակառակ, մեր մեծանուն գրողները՝ Ս. Արտյանը, Բաֆֆին, Պ. Պոռյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Սա. Զորյանը, Դ. Վարուժանը և ուրիշները երբեք խոշոր եղջերավոր անասուն տերմինը գործ չեն ածել, այլ միայն՝ տալիս: Այս հանգամանքը մենք բացատրում ենք նրանով, որ մեր գրողներն իրազեկ են հայ ժողովրդի բառամթերքին և ելնում են զրանից, իսկ մեր մասնագետներից շատերը, շտիրայետելով հայոց լեզվին, բառացի թարգմանութիւնների հետևից են ընկնում: Մենք արդեն տեսանք, որ մեր բառարաններից շատերն էլ նույն վիճակումն են: Ոչ մի բառարանում տավարաբուծութիւն չեք գտնի, այնինչ ձիաբուծութիւն, խոզաբուծութիւն, ոչխարաբուծութիւն և այլն բոլոր բառարաններում կան: Պետք է վերականգնել տալիս տերմինը և նրա բոլոր ածանցյալ ձևերը:

Пахарь տերմինը ռուս-հայերեն մեր բոլոր բառարաններում թարգմանված է երկրագործ, նոգազործ, «Ռուս-հայերեն նոր բառարան»-ում՝ նաև ներկագործ, այնինչ մենք զրա համար ունենք հատուկ տերմին՝ հանրահայտ մանկալ-ը: Երկրագործ, նոգազործ ռուսերեն նշանակում է земледелец, իսկ հերկագործը հնարած է անհաջող, пахарь-ին ավելի մոտ կլինենք, եթե ուղղակի անվանվեր ներկուղ:

Пахтание-ն Դադրաշյանի բառարանում, 1945 թ. ռուս-հայերեն բառարանում թարգմանված է բլնուկ, այնինչ пахтание կամ пахта, որը մեր բառարաններում բացակայում է, նշանակում է թան, իսկ շիճուկը ռուսերեն կոչվում է сыворотка: Հայ-ռուսերեն բառարանը (1947 թ.) րուս-ը թարգմանել է сыворотка, пахтание: Ստացվում է, որ իբր թե այդ երկու տերմինները նույնն են, այնինչ առաջինը շիճուկն է, երկրորդը՝ թանը: Пахтание-ն, ավելի ճիշտ, пахта-ն, ստացվում է խնոցի հարելուց, կարագացման հետեւանքով, իսկ сыворотка-ն (շիճուկ)՝ պանիր պատրաստելուց (պանրաջուր): Այսպիսով, բոլոր բառարաններն էլ շփոթում են пахтание-ն сыворотка-ի հետ: Пахтание նշանակում է նաև խնոցի հարել:

Միայն են գործածում մեր մասնագետներից ոմանք клетчатка տերմինը, անվանելով այն բջջանյութ, այնինչ, клетчатка նշանակում է բջջարաղանք: Բջջանյութը բջջի պարունակութիւնն է: Թե՛ «Ռուս-հայերեն նոր բառարան»-ի և թե՛ 1945 թվականին հրատարակված «Ռուս-հայերեն բառարան»-ը клетчатка-ն թարգմանել են բջջանյութ և զրանով թյուրիմացութեան մեջ գցել մեր որոշ մասնագետների:

Հակասութիւններ կան նաև малина բույսի տերմինի նկատմամբ: «Ռուս-հայերեն նոր բառարան»-ը թարգմանել է սզնիկ մորենի, սզնիկամոր, 1945 թվականի բառարանը՝ մորենի, մոր, Դադրաշյանը՝ մորենի, իսկ պատուղը՝ մոր, մու:

Որքան մեղ հայտնի է, *малина*-ն մեր անտառաչատ շրջաններում, որտեղ առատորեն բուսնում է այդ բույսը, անվանում են մոռենի, իսկ պտուղը՝ մոռ։ Մորի-ն *земляника*-ն է։

Այդ կապակցությամբ ուզում ենք երկու խոսք ասել *земляника*-ի (մորու) մասին, որը Դադրաշյանի բառարանում մի քանի անուն է կրում, այն է՝ ելազ, խմորուկ, մորի, իծամորի, գետնաբուր։ 1945 թվականի բառարանը բաց է թողել խմորուկն ու իծամորին և բերել է միայն մորին և գետնաբուրը։ Մեղ հայտնի է, որ իծամորին մորու հետ կապ չունի, դա առանձին բույս է։ Բայց թե ինչպե՞ս է մորին գետնաբուր դարձել, դժվարանում ենք հասկանալ։ Բացի դրանից, Դադրաշյանը ելազն ու մորին նույնացրել է, իսկ հայտուսերեն բառարանը ելազը համարում է *клубника*, և՛ *земляника*, այնինչ այդ երկուսը տարբեր բույսեր են։ *клубника*-ն յառիններն կոչվում է *Tragaria elatior*, իսկ *земляника*-ն՝ *Tragaria vesca*։ Նույն անորոշությունը կա նաև Ստ. Մալխասյանցի բառարանում։ Անհրաժեշտ է այս տերմինների նկատմամբ հստակ պարզություն։

Մեր մասնագետների շրջանում տարակարծություն գոյություն ունի զալ և խիժ տերմինների նկատմամբ։ Ոմանք նոր ծնած կենդանիների առաջին կաթը (*молозиво*) անվանում են զալ, մյուսները՝ խիժ։ Բարեբախտաբար մեր բոլոր բառարաններում այդ տերմինների նկատմամբ գոյություն ունի միատեսակություն։ Բոլոր բառարաններն էլ նոր ծնած կենդանու առաջին կաթը անվանում են զալ, իսկ խիժի մասին որոշակի բացատրություն չկա։ Միայն Ստ. Մալխասյանցն է զրադվում այդ տերմինով։

Բառակազմության և հնչյունական տեսակետից խեժը և խիժը շատ մոտ են իրար։ Հավանորեն խիժ-ը խեժ-ի ձևափոխումն է։ Խեժը հեղուկ նյութ է, որը դուրս է գալիս որոշ տեսակի ծառերի փնտրվածքներից և օդում թանձրանում է, այդ թանձրացած նյութը կոչվում է խեժ։ Ստ. Մալխասյանցը բերում է և խեժն-ը բառը, որը «կոփի զալ է մոխրի մեջ եփած»։ «Խեժնի պես փափուկ, մեջը ծակ-ծակ, ծակոտկեն»։ Այստեղից կարելի է հետևել, որ խիժը, խեղապես, եփած զալն է, կտրված, որը նույնպես փափուկ է և ծակոտկեն։ Այդ առումով մենք նպատակահարմար ենք գտնում նոր ծնած կենդանու առաջին կաթը անվանել զալ, իսկ կտրվածը՝ խիժ։

Մեր գյուղատնտեսական նոր գրականության մեջ քայնորեն գործ են ածում *дрожжи* (*дрожжевание*) տերմինները։ «Թուս-հայերեն նոր բառարան»-ը թարգմանել է մերան, խաշ, մակարդ, բուսախաշ բառերով, 1945 թվականի բառարանը կրկնում է նույնը, միայն այն տարբերությամբ, որ բուսախաշ-ի փոխարեն մտցրել է քլամոր։ Դադրաշյանը բուսախաշի և խոտախաշի հետ տալիս է զրոյի ուսերեն բառը։ Հայ-ուսերեն բառարանը *дрожжи*-ն անվանում է խաշ։ Ըստ Ստ. Մալխասյանցի, խաշն ունի հինգ նշանակություն։ Այստեղ նշված բառարանային տվյալներից երևում է, որ բերված հայերեն թարգմանիչ բառերն ունեն միայն բացատրական և ոչ թե տերմինարանական նշանակություն, ուստի անհրաժեշտ է, որ տերմինարանական կոմիտեն գտնի *дрожжи*-ի համար մի անվիճելի հարմար տերմին։

Մեր անասնաբուժական գրականության մեջ տարածված է *бонитировка* տերմինը, որը անփոփոխ գործ է ածվում որպես բոնիտիրովկա։ Այդ տերմինը առաջացել է լատինական *bonitas* բառից, որը նշանակում է լավորակություն (*доброкачественность*)։ *Бонитировка* նշանակում է գյուղատնտեսական կենդանիների տոհմական և տնտեսական պիտանիության աստիճանի որակական գնահատումը։ Մեր բառարաններում այդ տերմինը բացակայում է։ Մենք գտնում ենք, որ կարիք չկա *бонитировка* տերմինը անփոփոխ թողնել հայերենում, քանի որ մենք հնարավորություն ունենք դրա իմաստն արտահայտել հայերենով։ Մենք առաջարկում ենք բոնիտիրովկայի փոխարեն գործածել որակում (որակել) բառը, որը բոլոր համապատասխան բնագավառների պահանջներին կտա գոհացուցիչ բավարարում և ավելի մատչելի կլինի հայ ընթերցողի համար, քան բոնիտիրովկա-ն։

Հայտնի է, որ գանձակ կամ բալխան ասելով հասկացվում է որոհողների առաջին ստամոքսը և մեր բառարաններում դրանք ճիշտ են բացատրված։ Ռուսերեն դրան ասում են *требуха* կամ *рубца*։ Մեր գիտնականներից ոմանք, կամ չեն հավանել գանձակ և բալխան տերմինները, կամ նեղություն չեն բաշել նայելու բառարանները և թարգմանել են ուսերենից *рубца* բառը որպես կտրիչ։ Իսկ կտրիչը, ինչպես գիտենք, մարդու վերին և ստորին ծնոսների առաջին երկուական ատամներն են։ Ուսերեն դրանց ասում են *резцы*, որոնք *требуха*-ի կամ *рубца*-ի հետ ոչ մի առնչություն չունեն։ *Рубца* նշանակում է

նաև սպի, գանձակ-ը (գանձել բառից) և բափան-ը (թափել բառից) անհամեմատ ավելի տեղին են, քան նորաստեղծ կտրիչ-ը:

Վերջերս հաճախ հանդիպում է մի այլ նորաստեղծ տերմին՝ գրունտ: Սա գերմաներեն Grund բառն է, որը մտել է սուսայ լեզվի մեջ նույնությամբ՝ грунт: Հայերեն գանձանակում է հող, գետին, երբեմն էլ երկիր: Այս բառերով միշտ էլ հնարավոր է արտահայտել грунт բառի նշանակությունը տարբեր իմաստներով: Օրինակ՝ твердый грунт — ամուր, կարծր, սինդ գետին, плотный грунт — խիտ, պինդ, գետին, посадить в грунт — տնկել հողի կամ գետնի մեջ, грунтовая вода — գետնատակի կամ ստորերկրյա ջուր, հասկանալի չէ, թե ինչու հայկական ՍՍՏ Դիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի կողմից 1954 թվականին հրատարակված սուս-հայերեն բառարանում գրունտը մտցված է որպես հայկական տերմին: Ոմանք էլ գրունտը զարձրել են «հողագրունտ», եթե զուտ հայերենով արտահայտենք, կստացվի «հողագետին»: Իմաստ ունի՞ այդ: Խյուրիմացությամբ է դորձածվում ոմանց կողմից նաև «զակվասկա» տերմինը, քանի որ դրա համար մենք ունենք մակարդ, մերան, թթխմոր, մայա տերմինները: Բոլոր դեպքերում, երբ կարելի է սուսերեն դորձածել закваска բառը, կարելի է դորձածել և մակարդ ու մեքան բառերը:

Մի ժամանակ արուտի հերթափոխ արածեցումը մեր գյուղատնտեսական գրականություն մեջ անվանում էին «զագոնային» արածեցում՝ загон (աղալ) բառից: Հիմա էլ են, երբեմն, դորձածում:

Ռուսերենից և ուրիշ լեզուներից պետք է վերցնել այն տերմինները, որոնք մենք չունենք և չենք կարող կազմել մեր բառապաշարի օգնությամբ:

Որրեմն կարիք է լինում ընտրություն կատարել հայերենում եղած տերմինների միջև: Օրինակ՝ աշուրա, թե՞ տարեկան, տրամախաչում, թե՞ խաչածևում, խոնկո՞ւր, թե՞ գոնի, գետնախոնկո՞ւր, թե՞ գետնատանձ և այլն: Ոմանք կարծում են, որ նման խնդիրները կլուծվեն ժամանակի ընթացքում՝ տերմինների մրցման ճանապարհով: Սա սխալ մոտեցում է, տերմինների խնդիրը պետք է լուծել կազմակերպված ձևով, նպատակ ունենալով հրատարակել գյուղատնտեսական տերմինների հատուկ բառարան:

Ստացվել է 13 IV 1956 թ.: